որ այնքան կենդանութիւն էին տալիս տեսարանին: Տեղը բոլորովին հարթ էր եւ ջուրը քաշում էին հորից մի ահագին անիւով, որ դրսից աստիճաններ ունէր, որոնց վրա շարունակ քայլեր էր փոխում մի բանւոր, կարծես բարձրանալու համար, եւ այդ Սիզիֆեան աշխատանքով շարժեցնում էր անիւը:

ԲՐՆՁԻ ԴԱՇՏ

Յանկարծ այս բոլորին փոխանակեց մի երկար ցանկապատ, ծածկւած ահագին յայտարարութիւններով, ուր վիթխարի հասակով մի ջենտլմէն իր գարեջուրն էր առաջարկում՝ Օսակա beer: Ահա եւ ինքը գործարանը, որ ծխի մի սեւ ամպ էր տարածում երկաթուղու հէնց գծի կից: